

Ռամկ. ազատականութիւնը
ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՒ
ՀԵՏԱԳՆԴՈՒՄԸ

Ռամկավարութիւնն և Ազատականութիւնը, ո՞նէ
գասու և երկրի սեփական գաղափար կամ գրութիւն
չեն. անխտիր ամբողջ մարդկութեան կը պատկանին,
համաշխարհային են:

Ռամկավարութեան ամենէն ճիշդ ու կուռ սահ-
մանը տուած է Լինքըն. — «Ժողովուրդին, ժողովուր-
դէն, ժողովուրդին համար»: Եւ առանց ծագումի,
գրադումի ու վիճակի տարբերութեան, ժողովուրդին
մասը կազմեն ըստ մարդիկ — հասարակ աշխա-
տաւորն ու արհեստաւորը, առեւտրականը, տնտիկ
ձանչցուածներ, ուսեալը, անուար, հարուստն ու չը-
քաւորը եւն. — Ամէնքը հաւասար ազատութիւն և
նոյն իրաւունքները պէտք է վայելին ու ի գործ դը-
նեն: Ատոնց հետ նաև պարտականութիւններ ստանձ-
նեն ու կատարեն՝ իւրաքանչիւրը ըստ իւր յարմար-
ութեան, որպէսզի իրական ու արդիւնաւէտ Ռամ-
կավարութիւն տիրէ: Ունէ տեղ ու կարգերու ներ-
քեւ, ուր ժողովուրդին մէկ մասը օրինապէս ուրիշ-
ներ իրեն կ'ենթարկէ, իր մասնաւոր նպատակներուն
համար կ'օգտագործէ, ինչպիսի գրութիւն ու օրէնք-
ներ հաստատուած ըլլան, Ռամկավարութիւն չի մը-
նար, առ առաւելն անուն ու բառ մը կ'ըլլայ:

Այս միջոցին, երբեմն թերթերու մէջ և ու-
րիշ առիթներով, կը հանդիպինք «Դրամատիրական
Ռամկավարութիւն» բացատրութեան, ինչ որ շիտակ
է: Դրամատիրութիւնը գասակարգ մըն է, և պէտք
է որ ինքզինք պարտադրէ ամբողջ ժողովուրդին:
Նոյնքան շիտակ չէ «Աշխատաւորական Ռամկավարու-
թիւն»ը, թէև ամէն տեղ աշխատաւորութիւնը կը
պոյժ ժողովուրդին մեծամասնութիւնը: Գարծեալ
խալ է Դրամատիրութիւնը շփոթել, կամ նոյնացնել
Ռամկականութեան իրաւունքին հետ: Մարդուն ամե-
նէն գերազանց սեփականութիւնը, իր բազուկներուն
մտքին ոյժն ու աշխատանքն է: Իրական Ռամկա-
ւարութիւնը աշխատանքին իրաւունքը կը պաշտպա-
նէ ու կ'պահովէ, թոյլ չի տար որ ունէ գասու կող-
մ ու ձեւի տակ շահագործուի: Ընկերային ու տըն-
տական արդարութեան իրրև սկզբունք ու հիմ,
նախ կը լսենք. — «Չաշխատողը պէտք չէ որ ու-
նէ. նոյնքան ու աւելի արդար է, որ «Ամէն մարդ
վաստակը, իր աշխատութեան ամբողջ արդիւնքը ու
Ռամկավարութիւնը կ'եղծուին, երբ

Ռամկավարութիւնը կ'եղծուին, երբ
աշխա-
տաւորութիւն իրենց ցոյց տրուած գործը — աշխա-
տաւորութիւն և որոշուած չափով վայելել: Ռամ-
կավարութեան ներքեւ ամէն մարդ պէտք է աշխա-
տաւորութեան՝ ազատութեամբ, և իր
ըստ իր յարմարութեան՝ արդիւնքը ինք վայելէ, ինչ-
պէս որ կ'ուզէ: Հարկաւ, ատոր սահմանին մէջ կ'ըլ-
այ հանրային օգտակարութիւնը, որ ինչքան պար-
տականութիւն, նոյնքան վայելք է:

Կարեւոր է նաև շիտակ հասկնալ ու բացատրել
«Ռամկականութեան իրաւունք»ը: Ռամկավարութիւ-
նը հիմնապէս կ'ընդունի, որ ամէն մարդու իրաւուն-
քն է հետեւել իր նախընտրած աշխատութեան ու
տապարէկին, իր գործը զարգացնել, բարդաւած վի-
ճակի հասցնել և ունեւոր ըլլալ: Ասիկա չի նշանա-
կեր սակայն, որ անիկա ուրիշներու աշխատութեան
արդիւնքը իւրացնէ՝ ընկալելով կերպով ու զարտուղի
հնարքներով, և տարապայման մեծ ու անարդար
հարստութիւն կուտակէ: Այսպէս առեւտրականը, որ
արտադրողին ու սպառողին միջև միջնորդ է, իրա-
ւունք ունի իր այդ աշխատութեան վարձքը ստանա-
լու, բայց պիտք չէ որ անուղիղ միջոցներ ի գործ
գնէ, արժէքէն շափաղանց աժան գնելու և սուղ վա-
ճառելու: Գործատէրն ալ հարկաւ, իր միջոցներուն
— գրամադրուսին — և անձնական աշխատութեան
իրրև վարձք արտադրութեան շահէն բաժին պէտք է
ստանայ, բայց ոչ երբեք կրճատելով և իւրացնելով
բաժինը աշխատաւորութեան, որուն մեծամասնու-
թիւնը ստիպուած է իր առօրեայ ապրուստին համար
մտահոյ ըլլալ, որով համակերպիլ առաջադրուած
պայմաններուն: Նախաձեռնութեան իրաւունքը չի
նշանակեր աշխատանքի շահագործում, որ ունէ ձեւի
տակ տնտեսական անարդարութիւն է, և չի կրնար
պաշտպանուիլ:

Անգլիացի ակաւաւոր տնտեսագէտ մը, որուն
անունը ուսանողութեանս Քաղաքական Տնտեսութեան
գասագիրքի մէջ կարգացած եմ, բայց ճշդիւ չեմ
միշտ, գիտեմ սակայն որ ընկերավարական չէ, ըսած
է. «Ծարտար ու կարող մէկը իր արդար վաստակով
կրնայ մինչև տասը հազար սկիլ հարստութեան տի-
րանալ. ատկէ աւելին, եթէ գիւղէ, գողութիւն է»: Սերօրեայ
զափանխչով տասը հազարը կրնայ քանի մը
պատիկ աւելի գրուիլ, բայց պէտք է ընդունել որ
հարստութիւնը արդար վաստակով չի կրնար սահմանէ
մը անդին անցնել:

Ռամկավարութեան անբաժան է Ազատակա-

նութիւնը, որ բաց մտքով չի հետեւի ու քայլ կը
պահէ ժամանակին և ամէն ուղղութեամբ յառաջդի-
մութեան հետ: Երկուքին ի միասին տարողութիւնը
այնքան ընդարձակ և էութիւնը խոր է, որ ընկերա-
յին ու տնտեսական արդարութիւն և բարենորոգում-
ներ ալ կը բովանդակէ: Ռամկավար Ազատական գա-
ղափարաբանութիւնը միայն ամէն ձեւ ծայրայնու-
թեան ու չափազանցութեան չի յարմարել: Կը հա-
ւատայ ու հետամուտ կ'ըլլայ, ոչ թէ յեղաշրջումով
ու ստումով, այլ բարեշրջումով ու ամուր ընթաց-
քով յառաջդիմութեան, և բոլոր դասերու, ամբողջ
ժողովուրդին, շինութեան ու բարգաւաճման:
Արտասահմանի Հայ իրականութեան մէջ այ-
հիման վրայ ու սկզբունքներով կազմակերպութիւն
մը, եթէ գոյութիւն չունենար եւ իր օգտաշատ գործ-
նէութեամբ ծանօթ չըլլար, պէտք էր կազմել: Ռամ-
կավար Ազատականութիւնը ինքնին յարմարութիւն
եւ արտասահմանի Հայ հա-
մայնքներուն միջև յարաբերութիւն զարգացնելու և
հայկական խնդիրներու ու նպատակներու շուրջ գոր-
ծակցութեան համար Հայաստան կրնայ վստահ ըլ-
լալ որ ատիկա թիւր մեկնութիւններու տեղի չի տար
Սփիւռքի Հայոց ապրած երկիրներուն ու միջավայրին
մէջ: Սփիւռքի Հայ համայնքներն ալ գիտեն որ իրենց
հայկական նախնաձայնորութիւնն ու ձգտումները
ընական ու իրաւացի կը նկատուին, նոյն լուկ համա-
կեր վերաբերմունքի ու գործօն օժանդակութեան ա-
ռարկայ կ'ըլլան, ուր որ կը գտնուին, որով ապահով
հետ ըլլան, ոյժ տան անոր գործունէութեան, իրենց
Հայաստանի հետ յարաբերութեան ու մօտիկութեան
տարբեր միտքեր չեն վերագրուիլ:
Ռամկավար Ազատական կուսակցութիւնը Ամե-
րիկայի, Եգիպտոսի, Սուրիոյ և Լիբանանի, եւ երբ
ընականոն պայմաններ ու հարողակցութիւն հաստա-
տուին, Ֆրանսայի մէջ, ուր որ պատեհութիւն ըլլայ
կը գործէ, ու իր պարտքը կը կատարէ այս ոգևով
և ուղղութեամբ: Նոյն ատեն, որքան ալ նուիրեալ
ըլլան ու զոհողութիւն յանձն առնեն իր անդամե-
րը, պէտք ունի հայրենասէր ժողովուրդին աջակցու-
թեան, որպէսզի առանց մեծ խոստումներու, յարա-
տեւէ իր գերին մէջ և կատարէ պարտքը, թէ Հայ
Հայրենիքի վերաբերմամբ և թէ Սփիւռքի Հայու-
թեան մէջ:

Ա. Ն. ՆԱԶԱՐ